ՀՏԴ 72.025.5

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա.Ս.Քարամյան

ՎԵՐԱԿԵՐՊԱՐԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ, ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Աշխարհի գրեթե բոլոր մեծ ու փոքր բնակավայրերում, լինի դա մայրաքաղաք, արդյունաբերական, ագրարային, բուժական կամ տուրիստական ուղղվածության բնակավայր, գոյություն ունեցող ենթակառուցվածքների արդիականացման, դրանց ժամանակակից պահանջներին համապատասխան օգտագործման կամ վերակերպարանավորման մոտեցումները խիստ քննարկվելի են ինչպես մասնագետների, այնպես էլ հասարակության կողմից: Հատկապես զարգացած երկրները համատարած առանձնանում են գոյություն ունեցող ենթակառուցվածքների նկատմամբ խորը վերլուծությամբ, ճարտարապետական կառույցի գեղարվեստական կերպարի հնարավոր պահպանման սկզբունքներով:

Առանցքային բառեր. *վերակերպարանավորում, դեկոնստրուկտիվիզմ, մշակութային ժառանգություն, պատմական կենտրոն, հին կառույցներ, գոյություն ունեցող միջավայր, ավանդություն, ժամանակի պահանջ, նոր կերպար, դարաշրջան, մարդկային հոգեբանություն, պատմական փաստեր, բնորոշ հատկանիշներ*

Ճարտարապետական միջավայրի, առանձին կառույցների և համալիրների կերպարի արդիականացման, այսինքն՝ վերակերպարանավորման, դրանց ժամանակակից պահանջներին համապատասխան օգտագործման մոտեցումները, ֆունկցիոնալ նշանակության պահպանման, դրա զարգացման և նորացման խնդիրները հաճախ սուր քննարկումների առարկա են ինչպես մասնագետների, այնպես էլ հասարակության միջև: Հատկապես զարգացած երկրներում մասնագետներն ու իշխանությունը պարտադրված է հաշվի նստել հասարակության հետ: Հնի պահպանման, դա նորի հետ ներդաշնակեցման խնդիրները նոր ճարտարապետություն ստեղծելու համեմատ շատ ավելի բարդ և ծավալուն են, պահանջում են առավել խորը վերլուծություն, ինժեներական ոչ ստանդարտ լուծումներ և այդ պայմաններում ճարտարապետական միջավայրի նորարարական որևէ ծրագիր կարող է տարիներով չիրականանալ:

Բնակավայրերի ճարտարապետական միջավայրը, որպես կենդանի օրգանիզմ, նույնպես իր վրա կրում է ժամանակի պահանջներին համահունչ վերակերպարանավորման, խիստ անհրաժեշտության դեպքում կիրառական նշանակության փոփոխությունների, դեկոնստրուկտիվիզմի գործողություններ: [1]-ում նշվել է, որ վերակառուցումները, քաղաքաշինական կազմակերպումն ու ժամանակակից պահանջներին համապատասխան զարգացումները խիստ կախված են երկրի տնտեսական համալիրի զարգացումնորից,

հակառակ դեպքում դրանք վեր են ածվում ինքնանպատակ, ինքնաբավարար ձևափոխությունների և ներդաշնակ համակարգից դուրս օբյեկտների: Արագ ձևավորվող նոր աշխարհում շատ կարևոր է պահպանել և զարգացնել ճարտարապետության և մշակույթի արդեն իրենց տեղն ունեցող արժեքները, մանավանդ որ դրանք ճարտարապետական ձևերի և ֆունկցիոնալ առումներով չէին կորցրել իրենց արդիականությունը, բայց ֆիզիկապես մաշվել են՝ դուրս մնալով ուշադրությունից [1]: Պատահական չէ, որ «Ժամանակակից քաղաք»-ի խնդիրներին անդրադառնալու կապակցությամբ Լե Կորբյուզեն դեռևս նախորդ դարի կեսերին ասել է. «Աշխատանքին ձեռնամուխ լինելը մեկնարկել է երկու հիմնախնդրից - նախ և առաջ զուտ մարդկային տեսակետից՝ ներքին ընդհանուր հոգեբանական զգացողությունից և սրտի թելադրանքով, այնուհետև պատմական և վիճակագրական փաստարկներից: Ես ուսումնասիրել եմ հասարակության զարգացման հիմքերը և կատարելապես գիտակցել այն միջավայրը, որտեղ անցնում է մեր կյանքը» [2]: Ճարտարապետական զարգացումներն իրականացնելով արդեն իսկ ձևավորված, պատմություն ունեցող միջավայրում, բնականորեն առնչվում են մեծ մտավորականի վերոնշյալ հիմնախնդիրներին, իսկ մյուս կողմից դեկոնստրուկտիվիզմի՝ վերակերպարանավորման գաղափարին: Սակայն ***դեկոնստրուկտիվիզմը ճարտարապետության մեջ դա՝ հետազոտությունների ուղղություն է, հայտնագործությունների գաղափարախոսություն, այսինքն՝ բարեփոխման, վերակազմավորման գործողություններ*** : Գաղափարը ոչ այնքան ավերելն է, հիմնովին վերացնելը և բացարձակ նորը հիմնելը, որքան խորը վերլուծության հիմքում վերականգնման, վերաձևավորման առաջարկությունների ձևակերպմամբ այն գաղափարին հասնելը, թե ինչից է ստեղծվել տվյալ ամբողջականությունը, որ ժամանակի պահանջով է դիտարկման խնդիր դարձել:

Դեկոնստրուկտիվիզմը ճարտարապետության մեջ նաև օբյեկտի նախնական ֆունկցիոնալ նշանակության սպառվածության արդյունքում դրա սահմանափակումն է, սակայն այն միաժամանակ օբյեկտին նոր ինքնատիպ արտահայտություն հաղորդելն է՝ հետագա խիստ էական գործողությունների դրական իմաստավորմամբ [3]: Այսօր Երևանում կարծես հասել ենք այն սահմանագծին, երբ ևս մեկ քայլ և ամեն ինչ կհայտնվի ոչ բանականության կատեգորիայում (կամ արդեն այդ տարածական միջավայրում ենք), երբ անհրաժեշտ է ու ժամանակը վերաիմաստավորել դարերի կուտակած բարձրարժեք փորձը...

Հին աշխարհից եկող փոխկապակցվածության ոսկե օրենքը, երբ հստակ հիերարխիա գոյություն ուներ բարձր դասի, հասարակ խավի, պաշտպանական կառույցների և այլ ֆունկցիաների միջև, էլեկտրոնային ցանցերով գերբեռնված ժամանակակից տարածական միջավայրում այլևս կորցրել է իր նշանակությունը: Բոլոր այն հզոր ու նշանակալից համալիրները, որ մեր նախնիներն իրականացրել են իրենց ժամանակակիցների համար և ավանդել հետագա սերունդներին, այսօր էլ գոյություն ունեն անվերջանալի տարածական միջավայրում և հստակ դասակարգմամբ տարանջատում են ճարտարապետական կերպարը՝ դրա ներսում ձևավորված ֆունկցիոնալ նշանակությունից: Ընդ որում, ի տարբերություն

ներկայիս բազմաթիվ օրինակների, այդ ժառանգության յուրաքանչյուր կերտվածքի կերպարից կարելի է հստակ պատկերացնել դրա բնակելի, գործարարական, հոգևոր-մշակութային կամ այլ ֆունկցիոնալ նշանակությունը:

Համակարգչային ցանցերի ազդեցությունը տարածվում է անսահման տարածական միջավայրում և գործնական հարաբերությունների համար նշանակություն չունի, երկիր մոլորակի որ կետում են գտնվում փոխգործակցողները [4]: Եթե ոչ վաղ անցյալում ճարտարապետական զարգացումները գլխավոր հատակագծերի, գոտևորման և կառուցապատման նախագծերի հիմքում տեսականորեն և գործնականորեն բնորոշվում էին որպես հստակ ուրվագծված և կանոնակարգված բնագավառ, ապա ներկայումս բարձր տեղեկատվական համակարգերի, նոր տեխնոլոգիաների և հաղորդակցության բազմաբնույթ ձևերի աննախադեպ արագացումների պայմաններում ստեղծվել են այլ ֆիզիկական և հոգեբանական պայմաններ: Այդ զարգացումները տնտեսապես զարգացող երկրներում ընկալվում են որպես դինամիկ, հետևողականորեն ծագող, ժամանակի և տարածության մեջ չամրագրված և աննախադեպ փոփոխվող մոդելների ներկայություն :

Սակայն դա չի նշանակում, որ միջավայրի առաջին դոմինանտը՝ ճարտարապետական օբյեկտները սպառել են դրանց նկատմամբ մարդկային զգայական ընկալումը, կարիքի անհրաժեշտությունն ու հիշողությունն ավանդական մշակութային արժեքների նկատմամբ: Ճարտարապետաքաղաքաշինական զարգացումներն ինչպես անցյալում, այնպես էլ այսօր ընկալվում են որպես դինամիկ զարգացող դոմինանտներ ոչ միայն բնակավայրերում, այլ նաև ողջ տարածական միջավայրում: Ճարտարապետական առանձին կերտվածքի և ամբողջական միջավայրի կերպարի արդիականացման, դրանց ժամանակակից պահանջներին համապատասխան օգտագործման մոտեցումները, ֆունկցիոնալ նշանակության առավել բացահայտման, հնի և նորի ներդաշնակեցման խնդիրներն ակնհայտորեն նոր ճարտարապետություն ստեղծելուց ավելի բարդ են հենց վերոնշյալ առումներով:

Ք.Տորոնտոյի խիտ կառուցապատված, հիմնականում երկնաքերներով կազմակերպված գործարար կենտրոնը մեծապես ընկալվում է որպես ք.Նյու-Յորքի գործարար կենտրոն, որը խիստ տարբերվում է Անգլիայի կամ եվրոպական խոշոր քաղաքների հասարակական կենտրոններից՝ նորագույն տեխնոլոգիաներով և նյութերով իրականացված ներդաշնակ համալիր լուծումներով կազմակերպված իր խիստ ժամանակակից արտահայտությամբ: Իրականացված լինելով գաղութատիրական ժամանկաշրջանից հետո, այն արագ տեմպերով զարգացել և այսօր իր նոր զարգացումներն է ապրում չափազանց սահմանափակ տարածքային պայմաններում՝ Օնտարիո լճի ափով ձգված արդեն իսկ խիտ կառուցապատված հատվածում:

Առաջին հայացքից ամեն ինչ թվում է բանական և ոչ արտառոց: Մի քանի գործարար կենտրոնների և բանկային համալիրների միջև խիստ ժամանակակից կոնստրուկցիաներով իրականացված վերգետնյա և ստորգետնյա տաք անցումային գոտում խնամքով պահպանված է անցյալ դարասկզբին իրականացված հասարակական նշանակության մի կառույց՝ ոչ միայն իր

վաղեմի ավանդական ճարտարապետական կերպարով, այլ նաև ֆունկցիոնալ նշանակությամբ (նկ.1-3):

Նկ. 1. Տաք անցում Տորոնտոյի գործարար կենտրոնում

Նկ. 2. Կապը ստորգետնյա հարկերի հետ

Նկ. 3 .Գաղութատիրական ժամանակաշրջանի կառույց տաք անցումում

Նկ. 4. Հնի և նորի համադրությունը Տորոնտոյի կենտրոնում



Նկ. 5. Դեկոնստրուկտիվիզմի լավագույն օրինակ քաղաքային միջավայրում



Նկ. 6. Տորոնտոյի գլխավոր փողոցներից մեկը

Երբ գրեթե իրար հենված երկնաքերերի պարտերում հանդիպում ես նախորդ դարերից մնացած ոչ բարձրարժեք մեկ-երկու հարկանի կառույց կամ անշուք շարվածքով պահեստային շինություն, ներսում առանց սվաղի կամ առաստաղի և պատերի նուրբ հարդարման, սակայն նոր իմաստավորմամբ, ապա հասկանալի է դառնում ինչպես այս քաղաքի, այնպես էլ ողջ երկրի մշակույթի և վարած քաղաքականության ուժգնությունը, «հուշը» արժևորելու աստիճանը (նկ. 4-6): Եվ այս ամենը մի երկրում, որտեղ եկվորների մեջ գրեթե գոյություն չունի էթնիկ բնակչություն: Այս գրեթե ավերված կառույցը բակային մասից հարող տարածքում իրականացվող երկնաքերի բարձրացմանը զուգընթաց վերականգնում է իր նախկին կերպարը (նկ. 7, 8):



Նկ. 7. Գոյություն ունեցող և պահպանվող հին կառույց Տորոնտոյի մեծ կենտրոնում

Նկ. 8. Հին կառույցի վերականգնման և նրան կից երկնաքերի նախագիծը

Երևի մեծ մտավորական Ա.Ս.Լիխաչեվի այն խոսքը, որ «Կուլտուրայի նշանակությունը բացատրվում է նրա տիեզերականությամբ, իսկ հուշը կուլտուրայի հիմնական հատկանիշն է: Հայաստանը կա և մնում է որպես բազմադարյան մշակույթի տիեզերականությամբ «տառապած» երկիր, նա հիշողություն ունի»-մեր երկրի ճարտարապետական միջավայրի նկատմամբ վարած քաղաքականության առումով մեծապես կորցրել է իր թանկարժեք իմաստը....

А.С.Карамян

СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ К МОДЕРНИЗАЦИИ И ТРАНСФОРМАЦИИ АРХИТЕКТУРНОЙ СРЕДЫ, ИХ ОСООБЕННОСТИ В РАЗНЫХ СТРАНАХ

Почти во всех крупных и маленьких населенных пунктах земного шара, будь то столица или поселение промышленной, аграрной, лечебной или туристической направленности, подходы к модернизации существующей инфраструктуры, к её эксплуатации или трансформации в соответствии с современными требованиями обсуждаемы как со стороны специалистов, так и общественностью. Повсеместно, особенно развитые страны отличаются глубоким анализом в отношении к сложившейся инфраструктуре, принципами возможного сохранения художественного облика архитектурных сооружений.

Ключевые слова: *трансформация, деконструктивизм, культурное наследие, исторический центр, старые постройки, существуюшая среда, традиции, требование времени, новый облик, эпоха, человеческая психология, исторические факты, характерные черты*

A.S.Karamyan

CONTEMPORARY PECULIARITIES AND APPROACHES OF MODERNIZATION AND TRANSFORMATION OF THE ARCHITECTURAL ENVIRONMENT IN DIFFERENT COUNTRIES

Almost in all large and small settlements of the globe, be it a capital or industrial settlement, agrarian, medical, tourist or other orientation, the modernization of the existing infrastructure, approaches to their

operation or transformation according to the up-to-dateness, is deeply discussed both by specialists and wide layers of the society. Especially in developed countries, the principles of in-depth analysis with respect to the existing infrastructure are widely differing with a view to the possible preservation of the applied purpose and the artistic appearance of the architectural structure.

Keywords: *transformation, deconstructivism, cultural heritage, historical center, old buildings, existing environment, traditions, up-to-dateness, new look, era, human psychology, historical facts, characteristic features*

Գրականություն

1. **Քարամյան Ա.Ս.** Ճարտարապետական և հատակագծային հորինվածքի փոխկապակցվածության խնդիրները տարածական միջավայրում // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ. - 2016. - Հ.III (62). - էջ 157-163:
2. **Ле Корбьюзье.** Творческий путь. - М.: Изд-во литературы по строительству, 1970. - С.43.
3. **Антонова Н. С.** Дерида и грамматология (Жак Дерида о граммотологии). –, 2000. - С. 7-105.
4. **Уильям Митчелл.** Я плюс плюс/ Институт медиа, архитектуры и дизайна "Стрелка". - М., 2012. – С. 13-27.

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակում:

Քարամյան Անահիտ Սերգեյի, ճարտ. թեկն., պրոֆ. *(ՀՀ, ք.Երևան), ՃՇՀԱՀ, - ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. Ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., Ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, (+374) 91957001, anarchitect@mail.ru*
Карамян Анаит Сергеевна, канд.арх., проф. *(РА, г.Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. ак. Ал. Таманяна, н.с, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, (+374) 10565390; (+374) 91957001, anarchitect@mail.ru*
Qaramyan Anahit Sergey, PhD in Architecture, prof. *(RA, Yerevan) - NUACA, Chair of Architecture Drafting and Design of Architectural Environment, researcher, (+374) 91957001, anarchitect@mail.ru*

Ներկայացվել է՝ 29.06.2017թ.
Ընդունվել է տպագրության՝ 07.07.2017թ.